Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039
հեռ.՝ 010303010
mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

№ ԱՀ-254 16.05 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) և «Արմվիլ Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Վաճառող) միջև 2024 թվականի մարտի 15-ին կնքվել է N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/15-8 ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Համաձայն «Արմվիլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրության Վաճառողը առաջարկել է լուծել Պայմանագիրը 17-րդ չափաբաժնի մասով: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով 2024 թվականի մայիսի 8-ի N ՍԱ-241 գրությամբ «Արմվիլ Գրուպ» ՍՊԸ-ն հայտով նշված HermineA85@mail.ru էլեկտրոնային հասցեին ծանուցվել է N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/15-8 ծածկագրով պայմանագրի մասնակի միակողմանի լուծման մասին և վերջինիս մասին հայտարարությունը 2024 թվականի մայիսի 8-ին հրապարակվել է https://gnumner.minfin.am/ կայքում:

Հիմք ընդունելով, որ «Արմվիլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից մինչև գրությամբ սահմանված 14.05.2024թ չի վճարվել պայմանագրի կատարման և որակավորման ապահովումները, «Արմվիլ Գրուպ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի տնօրեն Հ. Զոհրաբյան